ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով

օդորակչի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման, գնահատման և ամփոփման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 13.05.2024թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը

Անդամներ՝ Ա. Հարությունյանը

Հ. Հեքիմյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյանը

Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության կարիքների համար Օդորակչի ձեռքբերման նպատակով ս.թ. ապրիլի 25-ին էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am կայքի միջոցով /Համակարգ/ հայտարարվել է ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով ընթացակարգ /Ընթացակարգ/:

Հայտերը բացվել են էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am կայքի միջոցով, ս.թ. մայիսի 6-ին, ժամը 10:00-ին:

Հակադարձ աճուրդը կայացել մայիսի 7-ին ժամը 10:00-10:30 ժամանակահատվածում:

1. Հանձնաժողովը արձանագրեց.

Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն	Հեռախոսահամար	ՀՎՀՀ
1	ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊԸ	ք. Երևան, Անդրանիկի 33/4 kondit.v@mail.ru	+374 94-111-340	01840487
2	ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ	ք. Երևան, Բաշինջաղյան 159/46 tender-viva@mail.ru	+374 33 022 537	01302704

1. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

2.1 ՆԱՌ-ԱՎ ՍՊ ընկերության հայտը մերժվել է Համակարգի կողմից ներկայացված գնի գերազանցման հիմքով, ուստի հայտը չի ուսումնասիրվել գնահատող հանձնաժողովի կողմից:

2.2 ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊ ընկերության հայտում առկա են ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով Հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն փաստաթղթերում հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Մասնավորապես՝ Հավելված 1-ում /դիմում-հայտարարություն/ ռուսերեն անվանումը նշված է հայերեն լեզվով, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում լրացված չեն արտադրողի անվանումը, ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և մակնիշը, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված են երկու ֆիրմային անվանում՝ օդորակիչ Daikin կամ Mitsubishi Electric, անհրաժեշտ է հստակեցնել:

2. Մասնակցիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների

Չափաբաժնի համար	Չափաբաժնի անվանում	Աճուրդի մեկնարկային գին	Մեկնարկ
1	օդորակիչ	1091666.67 AMD	2024-05-07 10:00:00

ՀՀ դրամ

Հ/հ	Զբաղեց-րած տեղ	Ներկայաց-ված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊԸ	1400000	1091667	20 %	1310000	1091667	20 %	1310000	
1	2	ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ	1400000	1300000	20 %	1560000	1300000	20 %	1560000	Մերժված

3. Հանձնաժողովը որոշեց

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 41-րդ կետով՝ 08.05.2024թ.-ին նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊ ընկերությունից պահանջել շտկել սույն արձանագրության 2.2 կետում նշված անհամապատասխանությունները՝ մինչև Eauction համակարգով նախատեսված ժամկետի ավարտը՝ 10.05.2024թ. ժամը 23:59-ը /Շտկման պահանջը ներկայացվել է Համակարգով՝ կցվում է/

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Ի գիտություն

Սույն արձանագրության 3-րդ կետով նշված ժամկետում 13.05.2024թ.-ին ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊ ընկերության կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը, որոնք համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին

4. Հանձնաժողովը որոշեց

4.1 Հիմք ընդունելով Համակարգի տվյալները, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊ ընկերության կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատել բավարար և 1 չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.2 Ընտրված մասնակից ճանաչել ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ ՍՊ ընկերությունը՝ 1-ին չափաբաժնով

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի /Օրենք/ 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.4 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստերը /բեռնվում է Eauction համակարգով և հրապարակվում է Տեղեկագրում/: Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրերի նախագծերը կտրամադրվեն մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո՝ 4-րդ աշխատանքային օրը

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Ա. Հարությունյան

Հ. Հեքիմյան

քարտուղար՝ Ա. Ավագյան